



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Կ Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

36^{րդ} ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 7 ՓԵՏՐՈՒԱՐ 1887

ԹԻԻ 3859

ՄԱՍԻՍԻՍ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամեայ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դրշ. եւ օտար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագրերը դրկելու է առ մատակարարութիւն Սրեւելքի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային (Տեղւոր երեւոյթ) Արարատեան Սուրբանդակ 25րդ Թիկնաթոռ Տնորական երեկոյթ մը Մեռնիկ Սղեկան մը օրագիրն Թիֆլիսէն նամակ Գրական սուրհանդակ (Նոր հանդէսները) Բաղադրական տեղեւորութիւնք Օրագիր

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 6 ՓԵՏՐՈՒԱՐ

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

ՏՆՈՒՐ ԵՐԵՒՈՅԹ

Միացեալ-Ընկերութեանց Հայաստանի վարժարաններու տեսուչը Սարգեան Մկրտիչ Էֆէնտի Մուշի մէջ ձեռքակալուելով զրկուած էր ի Կարին, ուր խիստ հարցաքննութիւնք կատարուեցան: Այդ հարցաքննութիւնք հաստատած են թէ Սարգեան Էֆէնտի բոլորովին անմեղ է:

Ընդհանուր աղբիւն. համար տարակոյտ մը չկար թէ այդ խնդիրն այսպիսի վերջաւորութիւն մը պիտի ունենար: Թէ՛ այս ձերբակալութեան եւ թէ՛ նմանօրինակ ուրիշ ձերբակալութեանց առթիւ տեղի ունեցած հարցաքննութիւնք միշտ ակներեւ ցոյց կուտան թէ՛ ամբաստանեալ հայերը զոհ կը լինին զրպարտութեանց: Ի հարկէ կառավարութիւն մը կարող չէ անտարբեր մնալ երբ զեկուցումներ կը տրուին իրեն այնպիսի աղբիւրներէ՝ որք վստահելի համարուելու իրաւունքը կրնան վայելել: Կառավարութիւնն արդարեւ մը կը կատարէ արձակելու միջոցներն: Կայեքը են: Իրողութիւնը տխուր է, բայց տարօրինակ չէ: Հայերը մասնաւոր ընդունակութիւն մը ունին մատենիչ լինելու: Մեր պատմութիւնը զայս կապացուցանէ: Օսմանցիք՝ որ զմեզ կը ճանաչեն, մեր նկատմամբ արդէն իրենց դատավճիռը վաղուց տուած են լակոնական բանաձեւով մը: «Մատնութիւնն Հայոց սեփհականութիւնն է»: Թուի թէ այս կարծիքն Օսմանցիք ունէին մեր մասին: Հինգ դարէ առաջ եւս: Երբ ֆարսի առաւ Պոլիս, ինչպէս յայտնի է՝ իւր հետ բերաւ գաղթական հայեր եւ հաստատեց օսմաներն: Այդ գաղթական հայերն մասնաւոր կոչում մը ունէին, այն է՝ լրտեսներ եւ մատենիչ յոյները:

Երբ կրնան վայելել: Կառավարութիւնն արդարեւ մը կը կատարէ արձակելու միջոցներն: Կայեքը են: Իրողութիւնը տխուր է, բայց տարօրինակ չէ: Հայերը մասնաւոր ընդունակութիւն մը ունին մատենիչ լինելու: Մեր պատմութիւնը զայս կապացուցանէ: Օսմանցիք՝ որ զմեզ կը ճանաչեն, մեր նկատմամբ արդէն իրենց դատավճիռը վաղուց տուած են լակոնական բանաձեւով մը: «Մատնութիւնն Հայոց սեփհականութիւնն է»: Թուի թէ այս կարծիքն Օսմանցիք ունէին մեր մասին: Հինգ դարէ առաջ եւս: Երբ ֆարսի առաւ Պոլիս, ինչպէս յայտնի է՝ իւր հետ բերաւ գաղթական հայեր եւ հաստատեց օսմաներն: Այդ գաղթական հայերն մասնաւոր կոչում մը ունէին, այն է՝ լրտեսներ եւ մատենիչ յոյները:

Չկայ բարոյական ակտ մը՝ որ այնքան պիտի լինի, որքան պիտի լինի մատնութեան ակտը: Մատնիչ մը այնպիսի արարած մ'է՛ որոյ մօտեցող տիպարն եւ ոչ իսկ անանոց մէջ կը գլուխուրդէ: Ամէն տեսակ գաղաններ կը գլուխուրդեն, բայց մատնիչ գաղան մը չկայ: Այդ ակտով վարակուած է հայ ժողովուրդն: Հայն ո՛ր որ ալ գաղթէ, ո՛ր կլինայի ներքեւ ալ գտնուի միշտ, երբ նուիրական մատնիչ մը իւր վզէն կախուած, միասին կը տանի մատնութեան աւանդութիւնն: Հայերն ո՛րքան ալ տարբեր կը թուին ստանան, ո՛րքան ալ իրարմէ հեռու մնան, բայց եւ այնպէս կատարեալ ներդաշնակութիւն մը կայ իրենց մէջ: Երբ հարկ է մատնութիւն ընել:

Կարնոյ մէջ հայ մատնիչը ժողովուրդի քահանայ է, վանայ մէջ հայ մատնիչը եպիսկոպոս է, Առաջնորդ է, Թաղական Խորհուրդ է, երեւելի վաճառական է եւ կը հաղորդէ տեղական իշխանութեան թէ հայերը վտանգաւոր են պետական շահուց: Թիֆլիզի մէջ հայ մատնիչն հրապարակաօս է, խմբագիր է, գրադատ է, ապագայ քահանայացու է եւ մատնանիչ կ'ընէ զհայ վիպասանն իբր աշակերտ ուսուցիչասաններու որք աքսորուած են ի Սիպիր, մատնանիչ կ'ընէ ամաթերիներ՝ իբր օրինազանց եւ Տէրութիւնը խա-

փող: Դանուրի եղերքն հայ մատնիչն հոգեւոր հովիւ է եւ իւր հոգածութիւնը կը տարածէ մինչեւ Մուշ, եւ անմեղ ուսուցիչներ կը զրպարտէ: Իդրի մէջ հայ մատնիչը խմբագիր է, կը թաղան պաշտօնեայ է, բայց ձեռքը մանրագիտակ մը ունի եւ ուր որ հետը մը գտնէ՝ որով կրնայ մատնել ժողովուրդի հայր մը, հակառակորդ լրագիր մը, անմիջապէս մատնանիչ կ'ընէ զայն իբր Տէրութեան թշնամիներ: Պոլսոյ մէջ հայ մատնիչն աղգասէր երեսփոխան է, կրօնասէր հրապարակաօս է եւ կը ներկայացնէ երկտասարդ հրապարակաւորներն, աղբիւն երեւցականներն, Տէրութեան հայ պաշտօնեայներն իբր ամենավատթար գործիքներ Օսմանեան Կայսրութեան թըշնամիներուն ակերտն մէջ:

Այս, այս տխուր երեւոյթն ամէն ուրեք կը պատկերանայ:

Երբ արեւն մը ապականեալ է, մարմնոյն զանազան կողմերը զլուելի վերքեր կը ցցուին: Մարմնոյն զանազան մասունքն առողջ կ'երեւին, բայց այդ վերքերը ցոյց կուտան թէ արեւն թունաւորեալ է, ապականեալ է: Մատնութեան ակտերն այն վերքերն են որք ցոյց կուտան Հայոց արեւն ապականութիւնը:

Դարման: — Դարման չկայ: Կան այնպիսի հիւանդութիւններ որք կը վերջանան՝ երբ ակտովիքը գերեզման մտնէ:

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՍՈՒՐՅԱՆԴԱԿ

ՄԱՍԻՍԻ Նախորդ թուովն հաղորդեցինք թէ՛ Կովկասեան կառավարութիւնը կը թաղան օրինաց ծրագիր մը առաջարկած է Բեդեքապուրիկ կեդրոնական կառավարութեան, որոյ համեմատ Հայոց դպրոցներու ուսուցիչք պարտաւոր լինին այսուհետեւ վկայական ունենալ Ռուսաց Սեփարիաներէն: Այս լուր զոր հաղորդած էինք վերապահութեամբ, գծադրաբար հաստատութիւն գտնելու վրայ է Տրփիսէն մեզ կը հաղորդեն որ Վեհ. Կաթողիկոսը կառավարութեան կողմանէ պաշտօնապէս թուով ստացած է թէ այսուհետեւ Հայոց դպրոցներու ուսուցիչք պարտաւոր լինին վկայական ունենալ Ռուսաց Սեփարիաներէն:

Ռուսաց Սեփարիաներն երկու կարգ-

են. առաջին՝ Հոգեւոր Դպրանոց, երկրորդ՝ Վարժապետանոց, որք կը կոչուին Ուշեւելիայ Սեփարէմ. այս վերջիններէն է որ հայ ուսուցիչը վկայական ունենալու պարտական են. Նոր օրինաց դպրանի նպատակն յայտնի է. Հայ ուսուցիչները կարող չեն այժմ վկայական ստանալ Ռուսաց վարժապետանոցներէն. Այդ վկայականը ձեռք բերելու համար հայ ուսուցիչը պարտական են կամ քննութիւն անցունել վարժապետանոցին մէջ կամ մտնել վարժապետանոցն. ո՛չ մին եւ ո՛չ միւսն հնարաւոր է.

Հայ ուսուցիչները նիւթական կարողութիւն չունին մտնել Ռուսաց վարժապետանոցներն եւ բաւական ատեն անդ ուսանիլ ռուսերէն լեզուաւ զանազան ուսումներ. Նոյն իսկ եթէ ունենան նիւթական միջոց՝ որով կարենան աշակերտիլ, դարձեալ չատ բնական է որ վարժապետանոցներու տեսչութիւնները մեծամեծ դժուարութիւններ յարուցանեն անոնց դէմ:

Հայ ուսուցիչները կարող չեն քննութիւն անցունել ռուսերէն լեզուաւ, վասն զի ինչ որ նորա կ'աւանդեն Հայոց դպրոցներու մէջ՝ հայերէն լեզուաւ է. հետեւաբար պարտականութիւն մը չունին խորունկ կերպով դիտնալ ռուսերէնն, եւ քանի որ քաջ չեն գիտեր ռուսերէնն, յայտնի է որ ո՛չ քննութիւն կրնան անցունել եւ ո՛չ վկայագիր ստանալ:

Եւ հետեւութիւնն, Հետեւութիւնն այն պիտի լինի որ հայ ուսուցիչներն անմիջապէս պիտի ճամբուին Հայոց դպրոցներէն եւ ռուս ուսուցիչներ պիտի յաջորդեն նոցա. Հայոց դպրոցներու փակման երկրորդ տպագրութիւնն է այս:

Ի՞նչ կ'ընեն կաթողիկոսն եւ Էջմիածին, երբ այսպիսի մեծ վտանգներ կը սպառնան Ռուսիոյ Հայոց. —Նախորդ թուով ըսինք թէ ինչ կ'ընեն. —Ի՞նչ կ'ընեն թուրքիոյ Հայք իրենց Պատրիարքովն ու Վարչութիւնովն հանդէպ այս մեծ վտանգներուն. Զայդալ կ'ըսենք յաջորդ թուով:

ՏՆՈՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹԱՐ

Ֆալորիդը լսած էի, սիրուն քերուէ Ֆալորիդը զոր դեռ նորատի պատանեակ կը պաշտէի, եւ հծծելով ռեգանցս տակէն.

Ange si pur que dans un songe etc.

Ճամբէն կ'անցնէի դուարթացեալ ներքին անմեկնելի խնդութեամբ մը զոր անտարակոյս յիս կը կայակէին փալիլուն տատեղը որ յաւերժահարսանց պէս հրապուրիչ ժպտաներ ունէին այն երեկոյին. Քովէս կը սահէին կ'անցնէին բաղնիքի ստուերը՝ թեւեւ մարդիկ կամ աւելի հաւանօրէն ուրուակաւոր. բայց ես անընդունորով յանկուցեալ երեւակայական աշխարհներու մէջ կը բնառէի Տօնի թիւի երգած անբիծ հրեշտակը. . . . երբ յանկարծ շէշ բարեկամ չե՞ս լսե՞ր՝ աղաղակեց ինձ վաղեմի

աշակերտակցացս մին . . . ո՞ր կ'երթաս ցնդեալ վերացեալ երկնաշու. . . — Դէպ ի տուն. — Ի՞նչպէս գտար այս իրիկուն

Idole si douce et si chère,
O toi qui vois tous mes combats! etc.

— Պատուական. բայց անոր հրապուրանաց վնաս մը չբերե՞ր կարծեմ երթալ Լըպօնէն կարկանդակ մ'ուտել. Ոչ, ոչ. մանաւանդ եթէ քին չամբանեով մ'ուղեմք անոր քաղցրութիւնը. . . Միայն՝ չարդողի՞ս ուտենք եւ ճամբայ ելենք. վասն զի գիտես որ տունս հեռու է. — Եթէ տունդ չենք կրնար մօտեցնել՝ սակայն կրնանք խնդիրը փոխելով՝ այս երեկոյ մեր տունն երթալ որ մօտ է. կը յիշե՞ս մեր Եւրոպայէն վերադարձին առաջին անգամ Rigoletto-ի երթալիս քանի մը դասընկեր ի միասին. մէկ բարձի վրայ քանի մը գլուխ հանգուցած էինք. բարձը կեդրոն մ'էր. դարձե՞ր յորմէ զանազան ուղղութեամբ մեր մարմինները կը ճառագայթէին. երջանիկ յիմարութիւն, ըսէ տեսնեմ. այդչափ անուշ գիշեր մ'անցուցած ունի՞ս բնաւ ամենէն կակուղ մահճաց վրայ. Ի՞նչ եւ է. եթէ այն իրիկունէ աղէկ չէ ալ տալիք անկողինս՝ դոնէ միմակդ պառկելու միտք արութիւնը կ'ունենաս. սենեակ մ'է որ լոկ բարեկամաց պահած ենք. — Մէկ մ'որ յիշատակաց զիրքը բանան երկու հինաւորք բարեկամք զժուարաւ կը յաջորդին զայն խփելու. ինչ ըսեմ կէս գիշեր էր. երբ թատրոնէն ելայ. եւ երբ պառկելու համար տուն հասանք երկու ժամ էր անցած կէս գիշերը. Բայց ինչպիսի պաղ ջրեր թափեցան՝ բոցաբորբոց խանդիս վրայ երբ դուռը բացուելով տեսայ որ աղախինը հասկցաւ թէ հոն պառկելու գացեր եմ. եւ Մեղուսայի փիմատառիչ նայուածքով մը բերաւ որ անիծից կայծակնէր արձկեց վրաս. Հասկցայ որ անուշութեամբ միայն հնար պիտի ըլլայ անոր դժոխային զայրացումն ողորել, ուստի ժպտանալուս գանձէն ամենէն քնքուշ՝ ամենէն զմայելիին՝ ամենէն հրապուրիչն հանելով այն ստորակարգ դիցուհւոյն մատուցի եւ թուեցաւ ինձ թէ գութն յուղեցաւ. եւ թերեւս ուղած էս քիչ մ'աւելի. Արեւեալ թէ Վառվառին (այս էր նազելի նաժտին անունն)՝ Վառվառին սրբտին խորերը խանդաղատանաց անսպասութեք կային որ կայծի մը կ'սողաւին բռնունկելու՝ պալթելու՝ հրդեհելու համար. Իւր քառասունամեայ այտերուն վրայ երկդիմի ժպտանք կը տեսնէի. Լոյս մը դրաւ քովս, վարադոյրերն իջեցուց, սենեակին մէջ ամէն կողմը տնտնաց եւ վերջապէս գաղջ ըմպելոյ՝ մ'աղղեցութիւնն ունեցող միջուկ ձայնով մը հարցուց թէ. արդեօք բանի մը պէտք ունիմ. — Ահ, ըսի, դիւրաւ հարուխ ըլլալուն՝ կ'աղաչեմ՝ օղոյ հոսանքէն գերծ մնալ. համար ելած ատենդ դուռը լաւ մը դոցէիր. — (Բանաստեղծական բուրբ աւելան հաւաքելով հաւաքելով այսչափ միայն կրցայ ըսել.)՝ Վառվառ դուրս ելաւ, թերեւս սիրտուելուն վրայ արձկած հառաչանքս լսելով Դեռ աղաւտութեան ամբողջ քաղցրութիւնը փայլած չէի երբ դուռն ուրեք բացուելով Վառվառիկը ներս մտաւ Վոռցայ, ըսելով. արդեօք գիշերը ջուր կը խմէք. — Ամբողջ հայերէն լեզուին ամենէն կարճ բառովն այդ խնդիրը լուծեցի. «Ոչ» — Դուռը գոցուեցաւ. բայց նորէն ինքզինքս չգտած բացուելով «Տէր իմ, ընաւ լուացուելու ջուրը. ձեր մօտն է. — Հասկցայ որ կորդեան հանգուցը խղելու է. «Ահ Օրիորդ, ըսի. առտուանց հրամիշ ինձ ըսելիքներդ ըսելու. վասն զի հիմայ այնչափ

յոգնած եմ՝ որ կը լսեմ բայց չեմ հասկընար. կարծեմ ինք հասկցաւ վասն զի դուռը գոցելով անգամ մ'ալ չտեսնուեցաւ.

Կրնար երեւակայել թէ այսչափ զանազան յուզումներէ վերջը կարելի չէր որ ամբողջ ջղային դրութիւնս ոտք չելէր. — Դիտէք որ այժմաւ ջղային դրութիւնը արտնայ եւ կանանց արտասովոր դիւրագրգռութիւն մ'ունին՝ այնպէս որ ապագայ սերունդը մեր ժամանակը Զալմէ Դոք թերեւս անուանեն. — Քուես փախաւ. . . . Թմրադեղի կաթիլ մը պիտի բաւէր զիս անդ որբելու՝ բայց Վարվառին դիմել խնդրելու համար. . . . քաւ լիցի. աւելի կ'ընտրէի մինչեւ առաւօտ աչք չգոցել. Բաղդէս քովս լրագիր մը դրայ. — այն ալ ամառուրնէ մնացեալ — բայց մեծ պարագայից մէջ բծախնդիր ըլլալու չէ. Բացի եւ ինկայ զուգաւոր մը վրայ զոր մեծանուն խմբագրատեղը կ'ընէր ընդ մէջ Պիգմարքի եւ Ալէսսոյ ընի աշխարհավարութեանց. Երկուքն ալ թերութիւններն այնչափ նրբութեամբ երեւան կը հանէր որ ես որ անգլիսէս եմ՝ կը ցնւէի. Ալէսսոյ դիւ հայերէն չգիտնալուն որ ժամանակին իւր ընթացքն ուղղէ եւ փրկէ զԱնգլիա մօտալուտ կորստենէն. Յատկեցի ազգային յօդուածի մը վրայ լուր մ'առնել փափաքելով կատարուած գործոց վրայ. . . . սոսկալի հայհոյանք՝ նախատինք՝ թուր ու մար. . . . Կամայ կամայ լրագիրը կը ներգործէր. . . . տողերն սկսան սեւ սեւ խուսափուկ գծեր երեւալ աչքիս եւ անոնց մէջէն կը տեսնէի որ Մորիէոս տակաւ դուրս կը կարկառէր իւր խաշաշներով պառկեալ գլուխը. . . . իսկոյն իւր բազուկներն ալ երկնցան եւ անդիմադրելի ուժով ծանրաբեռնալ արտեւանուեցաւ վար կը բաշխէ. . . . մամը մարեցի. . . . եւ . . .

Զգիտեմ որչափ ժամանակ քնացած մընացի երբ մարմինս մանր մանր բոցերէ լափիլիզած՝ զգալով՝ ըսն ընդ արթուն սկսայ զիւսհարական շարժումներ ընել՝ յափսթութեաւ գալ անկողնոյս մէջ. անհնար կ'ըլլար խցել նետել վրայէս այս Նեոսի պատմութեանը. Վայրապար բունն անուշ անուշ կը սողսկիւր երակացս մէջ. եւ զիս ուժաթափ կը նուաղեցնէր. կարելի չէր որ վայրկեան մը հանգիստ գտնէի. . . . Տալեւալիս մէջ մի չե իսկ — տես ինչ՝ անզգամ՝ եւ ի չարն հակամէտ է մարդ կային բնութիւնը — մինչեւ իսկ կարծեցի թէ Վառվառ իւր վրէժն առնու համար սատանայական փոշի ցնած էր անկողնոյս մէջ. . . . Ելայ՝ ճրագը փառեցի եւ ո՛վ սոսկումն. . . . O horrible! most horrible! ճրագիս լոյսը լուսաւորեց սաւանիս վրայ անհամար դժոխածին գունդեր մուկներու. . . . որոց խուռնամաքիս բազմութիւնն ինձ կը ներկայացնէր Սենեքերիմայ բանալի ջարդող միները կամ Յունաստանն սողատակող Քսերքսէսին. հրոսակները. Մոլեգնեալ խեղայեղ յարձակեցայ վրանին աւելի զայրապիւն քան զՍամիսոն Փղշտացոց վրայ. կամ զԷսոս խաչանց հետերուն դէմ. . . . Զեռքերս արեամբ կարմած էին՝ Լէտի Մաքսիլին ձեռքէն այս տարբերութեամբ որ առանց Սրբալոյ ամբողջ խուռները վատնելու կրնայի անոնց ծանր հոտն ի բաց թօթափել. Բայց երբ տեսայ որ սաւաններն ու բարձերն արեւելուայ էին եւ առկիս անդին արագ արագ փախչող կ'ըլլաւ մըլուկին բուն չէի կրնար հասնիլ՝ Մէղէնիօսի արժանաւոր անգթութեամբ զժենայ խորհուրդ մը երկնցի. . . . Վառվառին ցուցած

լուացուելու անօթն կիսով չափ ջուր լեցը-
նելով՝ ահագին ուկիտանոս մը կապմեցի այդ-
արամբակ մարդախոշոջ գազանները մէջը
խղդեցու համար եւ ափ ափ հաւաքելով ա-
նոնց կարմրագեւստ գունդերը մէջը կը նե-
տէի՝ ոչինչ նուազ յաղթանակաւ նայելով
անոնց վայրագ յուսակտուր փոհմաներուն
քան զՄովսէս ի կառս եւ յերկարս Փարա-
ւոնի սուզեալս ի ծով։ Գործը համառօտե-
լու համար ամբողջ սաւանն ամփոփեցի ի
տառնց եւ խնամով այդ փնտաւար ճծինե-
րը կոնքին մէջ թափեցի։ Բայց այսու
եւս վրէժս չյազելով՝ վերմակիս ամէն խոր-
չերն մանրադնին խուզարկեցի եւ գասալիք
փախստեայ մուկներն իւրեց զինակցաց
վիճակին վերածեցի առանց խաբուելու
ոչ անոնց կեղծ մեռած ձեւանալէն, ոչ ա-
նոնց ճարտար փախուստներէն զէս ի դու-
նաւոր կողմերը չտեսնուելու յուսով։ Ապա
իւստիտ հառաչանք մ'արձակեցի. գոռ-
թեան ինչպէս Թիւրէն երբ Մօնթէրքօ-
կին ընդ երկար իւր զխնաց ճարտարութեամբ
տարուբերեցին վերջը ձգեց վերջապէս իւր
ուզած գիրքին մէջ եւ յաղթութեանը վրայ
տարակոյս չմնաց։ Պերճութեամբ կը գիտէի
անոնց միջուկը մահուան դէմ. ինչ ճար-
տարութեամբ կը լողային՝ վրայէ վրայ կ'եւ-
լէին անողոք կոհակներէն ազատելու հա-
մար։ Ոմանք յուսահատ ինքզինքնին կը թո-
ղուին՝ եւ իսկոյն ջրէն ուռելով կը սուղէին
կոնքին խորը։ Արեւելի թէ գիշերանց մարդ
փիլիսոփայական միտումներ ունի. կը խոր-
հէի թէ արդեօք մարդկային զօրութենէն
վեր անգութ զօրութիւն մ'ալ կայ որ զօս-
նու այսպէս զմարդիկ իրարու վրայ յարձա-
կելով պատերազմաց մէջ՝ կամ զանոնք խուժ
խուժ քննելով ջրհեղեղներու եւ սասանու-
թեանց մէջ։

Լուսթիւնը խորին էր եւ լուսնի սպի-
տակափայլ սիւնակ մը վարագուրաց բաց-
ուածքէն կ'երկնայր բարձիս վրայ իմ ձեռ-
քըս էր երեւակայել թէ այն շողն օդային
պատմութեան էր ինձ հիւրընկալ եկած յա-
ւերժահարսի մը, փունջ փունջ անուրջներ
սփռելու համար սնարիս վրայ. բայց առիթ
ոչնեցայ հաստատելու թէ հզօր է քուն քան
զբանաստեղծութիւն եւ կրկին անգամ
ճրագս մարելով...

Ձէ կը խաբուիմ անտարակոյս... չկըր-
նար ըլլալ... այդ ձայնը... այդ նուրբ ձայ-
նը՝ ոչինչ աւելի ստուար. քան երազի մէջ
լուսածը՝ բայց ոչինչ նուազ աղքատ... ոչ
ոչ՝ ցնորից խաղաղիկ եմ. Ձայն չկայ...
Բայց նորէն կը լսեմ... չեմ խաբուիր...
արթուն եմ դեռ... այդ արթուն եւ ձայնն
հառաչանաց ձայն մ'է. բառերն հատիկ հա-
տիկ հատիկ կը լսեմ... «Ո՛վ թշուառ ազգս,
կ'ընէ. ո՛վ տարապարտուց զոհեալ ողջա-
կէզը»։ Այսչափ անհաւատալի տեսարանէ
մը խենթեանալ քան չէ. Աջքերս կոնքին վը-
րայ յատեցի. բւր լուսոյ սիւնն այժմ կը
ճառագայթէր. յախճապակին անթաց մա-
ւին վրայ կը տեսնէի... բայց ոչ... մէկն
ինձ պիտի չհաւատայ. լաւ եւս էր որ այս-
պիսի գաղտնիք մը դուրս չտայի. սակայն
գրողէ լուսապահութիւն պահանջել ջրվէժի մը
սահանքէն լուսթիւն խնդրելու պէս քան
մ'է... Ապագայ դաշուց կը յանձնեմ
իմ եւ թերեհաւատ ընթերցողացս դատը
կարելի Հերոդոտոսին կամ Տիտոս Լիվիոսին
վրայ ալ շատ կասկածներ եղած են եւ եր-
կար ժամանակ անոնք եւս դիւրահաւան
համարուած են՝ սակայն ներհուն խուզար-

կութիւնը անոնց ճշմարտախօսութիւնն ե-
րեւան կը հանեցին վերջապէս։ Ըսեմ ուրեմն
առանց վեհերեւու սիրուն ընթերցողուհի-
եացս ծաղրածու ժպիտէն... խօսողը...

«Ինչ կը նայիս ինձ, աւելցուց նոյն
դաշն այլ ազգու ձայնիւ. վրէժդ ամբողջ չի
լուծեցիր. դեռ ծարաւի՞ ես արեան...» Մե-
ծապատիւ Տէր՝ ըսի իրեն յարգանք՝ վասն
զի շատ մը մեծապատիւ տէրերէ աւելի
մարդուր կը խօսէր շայկայ լեզուն. թոյլ
տուք ինձ նախ գարմտնքս յայտնել այս ար-
տասովոր եղելութեան վրայ. ձեր ազգին
հետ մինչեւ հիմայ խօսակցելու պատիւն
ունեցած չէի, ուստի ոչ փոքր զարմանք... է՛հ,
ըսաւ գոյգն ինչ չիկնելով, մեր ազգին հետ
խօսիլ չգիտես՝ բայց զայն ջարդել գիտես...
—Ներեցէք. տրտուելի իրաւունք չունիք
կարծեմ. ես չէի նախադրեալ... Միթէ սը-
նանելու իրաւունք չունիք... Անտարակոյս
բայց մե՞ր արեամբ. ձեր խղճին չգպչի՞ր...
—Մենք ձեռն ոչ զոր մինչեւ ցարդ սպան-
նած ենք. ձեր խղճին արդեօք չգպչի՞ր երբ
ամէն օր բիւրաւոր անմեղ կենդանիներ կը
ջարդէք ոչ միայն ձեր քաղցի այլ ձեր օրկ-
րամոլութիւնը յազեցնելու համար։ Եւ ինք-
զինքնիդ ազատամիտ կը ծախէք... բէ՛հ...
Պիգմարիս ծնունդներ... գոնէ ձեր դա-
ստաւորն համարձակախօսութիւնն ալ ու-
նեցէք։ Զօրութիւնն յաղթող է՝ ամէն իրա-
ւանց... Դուք ալ Պիգմարիս վրայ կը խօ-
սիք... Ինչ ըսել է. իմ գերդաստանս իւր
բնագաւառն հաստատած էր Մատենադա-
րանի մը մէջ. քանի մ'ամիս կայ որ ես հաւ-
ուած ելով դաղթած եմ ազգային լրագրոյ
մը մէջ՝ եւ անոր կոյս թերթերուն ծոցը
բնակութիւն եմ հաստատած։


Երեւակայեցէք. զարմանք՝ հիացումս՝
ապշտութիւնս այդ խօսակցութեան վրայ.
Կարծեմ աւելի պիտի չըքանչանամ՝ այն օր
որ հոգիս մարմնայն բերթ թողով պիտի
պտտի առողջ աստղ եւ նորանոր ստեղծ-
ուածներ տեսնելով, ծառաց խօսիլն եւ
ծարկանց երգելը պիտի լսէ. Բայց յանկարծ
նշմարեցի իմ մուկս որ արագ արագ իւր
իւր բազմաթիւ ոտներն շարժելով դէպ ի
կոնք (քիչ մնաց ծով պիտի ըսէի) կը դի-
մէր... Ո՛ր կ'երթար՝ Վսեմապատիւ...
—Է՛հ՝ գոչեց՝ հոն ուր ընկերքս դիմթաւալ
ինկած են... Ահալաչեմ կը պաղատիմ՝ վայր-
կեան մ'ալ ապրեցէք. ես ձեզ ամէն հան-
գըստութիւն կը խօստանամ բայց միայն սա
խօսակցութիւննիւ շարունակենք՝ վասն զի
անհաւատալի դէպքի մը մէջ կը տեսնեմ
զիս... Ապրի՛մ. բայց ինչո՞ւ. ինչ կ'արժէ
կեանքը։ Յիւրաքի՛ եթէ գտնուէի այն եր-
կրկներն կամ գէթ մայրաքաղաքիս այն թա-
ղերուն մէջ ուր ազատօրէն կրնանք երթե-
ւելիլ գիշեր եւ ցերեկ մեր այցելութիւնքն
յօժարակամ ընդունող մահճաց եւ անձանց
վրայ՝ է՛հ կեանքն ապրիլ կ'արժէր՝ գոնէ
անկախութեան սիրոյն համար։ Բայց այս-
պէս հալածական վտարանգի՛ միշտ մեր
գլխուն վրայ առկախ ունելով Գոմիկէսի
սուրբ... թո՛ղ ինձ թող մեռնիլ... ոչ թէ
անգլիական սրկիւնէն՝ այլ յուսահատութենէ,
եւ ալ իմ լեւկադեան դարէս գահալիժե-
լով... Վսեմապատիւ Տէր՝ ըսի, ձեր խօսքերէն
ակն յանդիման կը տեսնուի, որ պատմու-
թեան գրոց մէջ թաւալած էք. ձեր նիհա-
րութիւնը կը ցուցնէ որ շատ անքուն գի-
շերներ անցուցած էք. բայց ներքի՞ է ինձ
զարմանալ՝ որ հայ գրոց մէջ երկարաբնակ
մնալէն վերջը ինչո՞ւ բնաւ մեր վրայ չէք
խօսիր... Ձե՞ր վրայ... —Հոս բրբիջ մը հանեց

զոր ընթերցողաց հասկցի եւս համար պիտի
ըսեմ թէ փշրած մանր գոպանակի մը սրա-
ձայն ճռնչին կը նմանէր եւ կամ մեծ իմ
բղղուէն... Ինչո՞ւ է այդ խնդալը... —Ձե՛ր
վրայ. կ'ուզես որ ուրեմն քու կարողութիւ-
նդ բոլորովն աւելցնեմ իմ վրաս զձեզ քիչ
մը ստորագրելով... —Հոգ չէ. մեր մէջ կըր-
նանք ամէն ճշմարտութիւն գրուցել. օտա-
րաց առջեւ միայն մեր դրօշը վեր բռնելու
ենք... Բայց ի՞նչ ըսեմ. ուստի սկսիմ. Ձեր
մատենագիրներէն. քանի՞ հատը կայ որ լըր-
ջօրէն իւր գրելիք նիւթն ուսումնասիրած
ըլլայ, կամ գոնէ գրածն ինք զիտնայ. ձեր
լրագիրք. ընթերցողութիւնն օտարաց եւ
այն ալ շատ անգամ առանց հասկնալու։
Ձեր գրողները՝ անմեղ տղաքը ճգմելու եւ
մտքերին շատ անգամ անկարող մարդկանց
ձեռքով անգլուելու բանտեր. Հարուստը՝ ան-
տարբեր եւ դուռդ. աղքատը՝ ուղածնին
չգիտնալով եւ Պանուրգիոսի ոչխարներուն
պէս միայն ըսածը միւս ամէնքը կրկնելով.
ազգին յանձանձանքը մէկ ծայրայեղութենէ
միւս ծայրայեղն երթալով. սրբալան պաշ-
տօնեայք՝ օրոց շափն չգիտես տղխու-
թիւնն աւելի է թէ ընչաքաղցութիւնն. ե-
րիտասարդութիւնը մոռնի մարմնը սէր կար-
ծելով. ամէն խնդրոց մէջ կատարեալ պա-
կասութիւն համոզման, նուրբ զգացմանց,
սկզբան մը եռանդ ազին յարման, կարգ եւ
պատշաճութեան... Այլ ասոնց տեղ
ծառայական նմանութիւն օտարին. կապ-
կուլթիւն հանդերձից, կապկուլթիւն լեզուի՝
կապկուլթիւն մտածութեան։ Ո՛վ երկինք՝
եւ ինչ բազմութիւն մեծ մարդկան...
Այսչափ կեղծեաց մէջ կանգուն մնացած
միայն իրապէս անհաշտ առեւտրութիւն եւ
նախանձ եղբայր ըլլալու սահմանեալ անհա-
տից մէջ... Ինչ մեծ մեծ խօսքեր եւ
ինչ փոքր փոքր գործեր... Հա՛ հա՛ հա՛
հա՛...»

Երթալով դպրոցին այնպէս կը յաւելուր
որ այլ եւս խօսքերն հեղձան իւր հաղա-
գին մէջ... Յանկարծ խոնաւ օդին մէջ իւ-
զի լալալերի մը զնգիկներուն պայթելուն
նման ձայն մը լսեցի... Ինչո՞ւ էր որ կա-
տաղութենէն պայթած էր...

25րդ ԹԻՒՆԱԹՈՒՄ

Մ Ե Ռ Ն Ի Ն Ք
(MOURONS!)



Ունեկին ձեռքդ, աչիդ ի յերկին,
Ձի՞նց խառնես յար եւ զի՞նց դիտես
Հրճոցին շուրջ, հրաւանց դու կից...
Մոխի՛ր՝ ճերմակ. եւ ձեռքդ տալ,
Եւ մոխրագոյն ամպի ի յերկին,
Դու զի՞նց դիտես, զի՞նց ի՞նց խառնես,
Աղու տեսիլ, դառն յիշատակ...։

Ոսկեգոծ մուրք այն ունեկին
Մրիսի մրմայ մերք մոխրին մէջ.
Նայուածեղ ալ՝ հոն՝ մուր յամպս սուգին
Եւ կառ անշարժ, ցո՛ւրտ, գերք մարմար...
Ձերմ է դեռ եւ քո՛յլ անկողին՝
Բուրեան իբրու քերթաւոյ մ'էջ՝
Որ աստղագաղղ ունի կամար...։

Գո՛գ, մոխրին մէջ բան մ'որոնես,
Գո՛գ ի մերան խրճարես եակ.
Ձի՞նց կորուսիր, զո՞վ կրագես,
Մոխրոց՝ ամպոց բնդմէջ հուր սի՛րտ։

Տրամաբարախիմ ակնարկեմ քեզ .
Հոսէ յաչացս աղի վրտակ .
Ի հոյին տես՝ համակ եմ սիրտ . . .

Բանաս վաղեմ շոյտ գունելիդ ,
Կայծակն աչկունդ ալ բացարժիւն .
Ժամէ անցանքն , ո՛ր պաշտելիդ ,
Ամբ անցանքն , — դեռ չապրեցար . . .
Դիմացդ ունի գալատկեր հայրիդ .
Այլ կենացդ ո՛ր պատկերք գրծին .
Յսոյդ ապարան , ի ձո՛ր , ի սա՛ր . . .

Օծուեալ գեղով ու հանճարով ,
Օծուեալ սրբով սիրահարուստ ,
Էիր էիր դու նոր Ստիփով .
Այլ շուրջդ անմարդ էր , ամայի . . .
Շրմուղաց քեզ բաւէր գորով . —
Գիտակց եւեր փայփայէր ուսդ ,
Եւ միայն ես գեղգե՛լ . . .

Այլ ծրտէի՞նք անուանել «էր
Ի մեզ անող այն բզգացում . —
Էին նոյն մեր հաւն ու հանի .
Եւ բնար մ'ես ունէի միայն ,
Մինչ էիր դու նոյն , գեղանի :
Ասէիր ինձ . «էր ես արքաում .
Ջրաւոր լե՛ր , ես՝ Է ապագայն . . .»

Եւ անցին ամբ , ապագայն հաւ .
Է անցելոյն այն հանգիստակ :
Աղհարաբիւն , արքամութիւն . — ա՛ս
Էր իմ անցեալ , ու բնար բրբռումն :
Ահաւասիկ արդ ե՛ւ ներկաս .
Աւելի՛ դառն հին յիշատակ . . .
Դեռ վայելած չե՛մ ես գարուն . . .

Սակայն հոյին դա՛նք եւս Է կեանք . . .
Կին ես , եւ ոչ գիտեմ զիսկի
Ձեռքի ալ կոյս . . . Բայց քե՛ւ պատրանք
Եղին կեանքս , բայց գիտեմ գայդ . . .
Ընդունանք՝ զանձ , զարդ , ապարանք .
Աղհար , արքումս՝ ես ինձ պէս արդ .
Ձեռք ըղձայիր , ինչ Է ներկայդ . . .

Ամուսին ես — գոր բնարեցիր —
Դամբանարան Է կենդանի . . .
Սիրել բզնա դու կարծեցիր .
Պրտակին տակ հոգեակդ էր սա՛ն . . .
Հիւանդացար ու հեծեցիր ,
Եւ յիշեցիր , ո՛չ , դու գանի ,
Ոչր հոգին յար հրրովդ էր վառ . . .

Ի յու՛շ ամիր , խնդրեցիր գայն ,
Ցառել այնմիկ ինչ անպատում . . .
Դիտել բզնեզ ի բաբառեան ,
Ձանցուտեան երգեալ գետն էր ,
Ընդերձմարեալ գիտեմ հանգրաւեան ,
Մերք երգեալ , յանձն խնդում ,
Ըզնեզ՝ դեռ կոյս՝ որ նմա տա՛ն ձեռք . . .

Եիրմաց համբուն վրայէն՝ ուր գնամ ,
Մօտ մօտ վիմաց , ներքեւ ամպոց ,
Ըզնեզ տեսնեմ՝ յաւեա փարբամ ,
Այլ յաւեան եւ կարեւոր . . .
Դու գեղայ տաճուս , մինչ ես խաղամ .
Այլ բան զիս մօտ՝ մրաւայ խարոց
Քերեւս ես , ո՛վ որ հայիս վեր . . .

Ունեին ձեռքդ , աչք ի յերկին ,
Խառնես գանիւն , նրկաւես գամպ .
Մոխրէն ի կայս արեգակին
Երբեւնիկ միտդ ալեծուի .
Փակուին աչք ես , բացուին կրկին ,
Վերկերին քեզ անիւն , ամպ . —
Ե՛կ , մեր շիրմին ես բարձի՛ զիտի . . .
Բարեկ

Ա.Ղ.ՉԿԱՆ ՄԸ ՕՐԱԳԻՐՆ

Պէշիր Ֆուստ Պէշ . — Մանկավարժութեան
դասարանութիւնն . — Անճառապանութեան
վրայ . — Անճառապանութեան Էճէնտի .
— Մարց դասարանութիւն . — Սուրբ Է շա-
բաթն :

2 փետրուար

Տարին կ'ընթաց . այլ մեր աչքերն ալ
կը թանայ . . . Վայրկեան մը մտքէս չեւ-
ներ այն հէգ Պէշիր Ֆուստ պէշն : Էր եր-
բեմն վիպասանութեանց զիցազուեններու
վրայ , անգոյ էականներու վրայ կ'արտատուէ-
ինք՝ այսօր , զոյս թիւն ու մեզ մօտաւորու-
թիւն ունեցող էակք են՝ որք կը խեն մեր
արտատուէններն : Անճառապանութիւն Էր .
պարզ կը կատարէին , բրիտանեայք կը կա-
տարէին . Իսլամն հոգ ալ սկսաւ մրցիլ եւ-
րոպացոց հետ , եւ՝ անհատաբար անհեղձ
զերազանցեց՝ Եւրոպացին . այս եղանակաւ
անճառապանութիւն Եւրոպայի մէջ կատար-
ուած չէր ցարդ՝ եթէ լուս կը յիշեմ : Սէր ,
անանկութիւն , հիւանդութիւն , սորա էին
ցայտօր կատարուած անճառապանութեանց
չարժանիք . հոս՝ յայտնապէս՝ զլիստոր
չարժանիք , զլիստոր մղիչն է Իմաստասի-
րութիւն : Թէեւ հանդուցեալն իւր կնոջ եւ
իւր հոմանշոյն ընդմէջ դժուար կացու-
թիւն մ'ունէր , թէեւ հարստութիւնն ապա-
ռած էր , թէեւ ժառանգականութեան
մօրն արտով վարակուելու երկիւղն ունէր ,
սակայն կինն ու հոմանիւն գործածելու շափ
ճարտարութիւն ունէր , յաւեա դիւրակեցիկ
ըլլալու համար իւր գրիչն ունէր (որովհե-
տեւ Տաճկաց մէջ կարող է մարդ այսօր իւր
գրիչով պարէլ) , վերջապէս Մօնէշրի՝ Ֆուստ
Պէշի երկիւղն հաստատած չէր բացարձա-
կօրէն . Ֆուստ պէշ կրնար իւր մօր նման
խելագարիլ , այլ եւ կրնար չխելագարիլ :
Այո՛ , Իմաստասիրութիւնն ըզմօտաւ անճ-
առապանութեան մըն է . հաւատացեալմը՝
Ֆուստ Պէշ պարբայն զի անճառապանու-
թիւն չը պիտի մտարեք իսկ . հոգեպաշտ
մ'ինքզինք չը պիտի բռնիլ ընէր : Բայց . . .
անհնարին է չը հիանալ այդ երկրասարդին
վրայ . պաղարիւնութիւնն՝ իւր շնորհիւ՝ ան-
ճառութիւն տալիս մը մէջ յայտնուեցաւ
մեզ , երակներն իրեւ կազմար գործա-
ծելի ժպտիլ ի տես այն վարդապետ տառե-
րուն՝ որք կենաց մասնիկներէն կը կազ-
մուին , նկատել իւր արեան հոսումն՝ որպէս
նկարիչ մը պիտի նկատուր գետի մը հոսումն ,
ի խորոց գերեզմանին գրե՛լ որպէս ի խորս
անտառին պիտի . բերթ էր մարդ ի ձայն եր-
գոց եւ ի տես դարբեաց , կարմիր արեան
մէջ իւր ճերմակ մարմնոյն ու սեւ մազերուն
ապրտաբութիւնն հեղձուցանել առանց
դեղեւելու . եւ առանց գողգօջելու , ո՛չ ,
մարդ Աստուծոյ արտեան ըլլալու է՝ որ
այսպէս գործէ . . .

նոյն 3

Սրբեք տեղեկութիւն ստացա՛ր կի-
րակնորեայ մանկավարժական դասարանու-
թեան վրայ . Բեզ երէկ ատոր վրայ պիտի
խորէի , եւ՝ միտքս բոլորովին Ֆուստ Պէշով
զբաւուած՝ բուն մ'իսկ չգրեցի : Պ . Քալան-
թարեանցի բուն վրայ . Սկսեք է իրական
ըստ հրատարակութեան , կամ մանաւանդ
հակառակ հրատարակութեան՝ կիրակի չէ
սկսեք՝ դասարանութիւնն : Երբ իրականն
Սկսեցին Էճէնտի Կեդրոնական վարժա-
րանն ուղղակի մեզ նկատ . հայրս անհամ-
բեր իրեն կը սպասէր : Հօրս տառջին հար-
ցումն եղաւ , «Ո՞վ կար» — «Ջրաղմաւ Պօ-

ղոս Աղան» պատասխան ընդունեցաւ : Իմ
տառջին հարցումն եղաւ . «Վարժուհի կա՞ր»
— «Մոյս կար» պատասխանեց Անդրանիկ
Էճէնտին՝ ծոցէն հանելով Տիկին Տիւնարի
Վարժուհին : «Դասարան համարելի անձ
մ'է . չէի տեսած դոյն . . .» — «Ես տե-
սած եմ Պ . Քալանթարեանցն . իր դասարա-
նութեան վրայ մեզի բան մը ըսէ՛» . ընդ-
հատեց հայրս . — «Իր դասարանութիւնն
այն ժամանակ պիտի սկսի , երբ ստորագրող
ունենդրոց թիւն հասնի ըսանհիւնդի» —
«Իրա՞ւ , իրա՞ւ , զէթ ըսանհիւնդ դասարա-
նէին եկա՛ւ» — «Գարեջուր խմելու համար
իսկ ըսանհիւնդ դասարան չեն միտար մեր
ազգին մէջ , ո՛ր միտց դասարանութիւն
մտիկ ընելու , Մանկավարժութեան վրայ
դաս մտիկ ընելու համար» — «Ուրեմն բը-
նու չը խօսեցաւ» — «Իր վրայ խօսեցաւ :
Յայտնեց թէ ինչո՞ւ Ռուսահայոց մէջ այս-
պիսի բան մը չէ հաստատուի . Ռուս կառա-
վարութիւնն այն պայմանաւ արտօնութիւն
պիտի տայ եղեր՝ որ ռուս լեզուաւ տեղի
ունենայ դասարանութիւնն . Ռուսին կեցցէ
Մակար Կալանթարեան Յայտնեց թէ՛ Ռուսահայոց
մէջ այսպիսի դասարանութեան մը յաջողու-
թեան յուսով եկած էր ի Պօլիս . Իր յոյսն
սկսաւ սպաւելիլ . ստորագրուեցան տասն
մէկ ռուսացիք , որոց ոմանք Դասարանէն
դուրս ելնելէ յետոյ կ'ըսէին թէ՛ քաղաքա-
վարութեան համար ստորագրած էին , որով-
հետեւ դասարանն ծոցէն թուղթ մը հանել
եւ իրենց ներկայացուցեր է . ստորագրելու
համար (ոչ անշուշտ բանի) : Յայտնեց վեր-
ջապէս իր փափագներն , իր մեծագոյն փա-
փաշն , որ է վարժապետանոց մը հիմնել .
երբ խօսեցաւ իր բարոյական կարողու-
թեան վրայ եւ ակնարկեց իր նիւթական
անկարողութեան , երբ ըսաւ որքա՛ն շնոր-
հալուեցայ . . . Մեծ փափաքներն ալ
միշտ փոքր ըսակներու մէջ կը մտնեն , ա-
ւա՞ղ . . . Դասարանն յետոյ խօսքն ուն-
կեց իրենցուն տուաւ : Պ . Տէմիրճիպաշեան
նախ խօսք տուելով , դիտողութիւն՝ ըրաւ
թէ՛ բաւական ընդարձակ ծանուցում եղած
չէր օրագրաց միջոցաւ , որով պիտի արգա-
րանային կամ կրնային արգարանալ դասա-
րանութեան չեկող ուսուցիչներէն շատեր .
դիտողութիւն ըրաւ դասարանութեան տե-
ւողութեան ալ վրայ , որ շատ երկար էր
(5 ժամ) : Ռուսահայ մանկավարժներու տա-
րապայման յաւակնութեան եւ Ռուսահայոց
նկատմամբ Ռուսահայոց ամեն ամթիւ
յայտնած արհամարհանաց դէմ նուրբ ըն-
նադատութիւն մ'ըրաւ Պ . Տէմիրճիպաշեան ,
երբ ըսաւ թէ՛ ի իրախոյս Պ . Քալանթար-
եանցի՝ իր դասարանութեանց պարտէին
ներկայ գտնուիլ մեր այն ուսուցիչք իսկ ,
որք Ռուսահայ մանկավարժին դատեքն նոր
ծանոթութիւն մը չը պիտի ստանային : Յի-
տոյ Պ . Սիմոն Յովնանեան նոյնպէս նրբու-
թեամբ ըննող տեղեց Պ . դասարանն , երբ
խօսեցաւ Գեղահան պարծառներու վրայ՝ որք
կ'արդ ինչին յօժարամիտ դասատուներ ա-
մեն կիրակի գալ Կեդրոնական վարժարան ,
եւ որոց ինք՝ թէեւ գաւառացի մանկավարժ
ծանօթացած էր Պօլիս գտնուելէն ի վեր .
Պ . Յովնանեան , չեղտելով Գեղահան բառն ,
անտարակոյս կ'իմացնէր Ռուսահայ մանկա-
վարժներու թէ՛ չը պիտի յաջողէին Ռուսա-
հայոց մէջ , ցորեան Գեղահան հանգամանքն
նկատողութեան հանձնուին եւ ըստ այնմ
վարժարանաց կանոնադիր չը պատրաստէին :
Ռուսացիներ կան՝ ըսաւ՝ որոնք Կալանթարեան
հետեւ կը բնակին , եւ որոնք Գեղահանով
չոգեանաւի համար մանրուք չունենին այն օր

իրենց գրաւորին մէջ . . . Սյու խօսքին, միտքս եկաւ, Նուրանիա՛, այն վարժապետն որ անցեալ տմ փողոցն ինքնիրեն խօսելով կ'երթար: Յետոյ խմբայ, որ թաղական Խորհուրդն՝ եօթն ամսականի տեղ՝ թուղթ մը տուեր է այն հէ՛գ վարժապետին ձեռքն. հացագործ ու նալարաւաճառ իրենց պահանջքին տեղ չեն. ընդունեն բնականաբար այդ թուղթն: Իրաց այս փնտրելի մէջ է որ Ռուսահայ մանկավարժն՝ ուսուցչաց տարեկան տալ կ'առաջարկէ փոխան ամսականի . . . Վերադառնալով կիրակի աւուր դաստիարակութեան, Անդրանիկ-էֆէնտին լաւատես չէ: Եւ կը ցուի Պ. Քալանթարեանցի համար, որ իրեն համակրանք աղբեր է:

նոյն 4

Մարտի երէկ իրիկուն ստացայ, Նուրանիա՛: Մայրէ՛ծայր Ֆուատ Պէյի եւ անձնասպանութեան վրայ կը խօսին այս անգամ Օրագրիդ մէջ: Արսես թէ վայրենիներն ալ անձնասպանութիւն կ'ընեն: Հաստատի՞ բան է: Սակայն գիտնոց, վատահելի ճանապարհորդաց վկայութիւններն յառաջ կը բերեն: Եւ ես կարծէի թէ քաղաքակրթութեան, խնամատարութեան արդիւնք է անձնասպանութիւնը: Այս առաւօտ մօրս հարցուցի, ոչ առ քեզ անվատահալութեամբ, այլ որպէս զի մօրս կարծիքն իմանալի: Հաստատեց ըսածդ: Մայրս ուրիշ բան մ'ըսաւ, որ սարսափ ազդեց ինձ. — Վիճակագրութեամբ կը հաստատուի թէ այս ինչ ժամանակամիջոցի մէջ աշխարհ անձնասպանութիւնք կը կատարուին: Հետեւեալ բար, այն անձինք՝ որք անձնասպանութիւն կը գործեն՝ ազատ չէին չը գործելու: Արեւմտ անձնասպանք յանցաւոր չ'են. ուրեմն անձնասպանութեան դէմ քարոզութիւնք անօգուտ են: ուրեմն պէտք չէ՝ գերեզմանատունէն դուրս թաղել անձնասպաններն ի պատիւ իրենց եւ ի խրատ կենդանեաց: . . . Մայրս սակայն զղջաց այրպէս խօսելուն, երբ զիս տարօրինակ կերպիւ ալալած տեսաւ: «Աղջիկս» ըսաւ, «որովհետեւ վայրենեաց վրայ խօսեցանք, Աստուարիդ վայրենիք բարի սովորութիւն մ'ունին. նոր մեռած մարդու մը վրայ չեն խօսիր. որքան եւս առաւել նոր անձնասպանի մը վրայ խօսելէ զգուշանալու էինք: Ա՛յ երբեք չպիտի խօսին Ֆուատ Պէյի վրայ: Ֆուատ պէյն յաւիտեան պիտի մոռնա՛ն: Ձեմ՝ ուզեր որ անձնասպանութեան վրայ գրուածք ալ կտրգաս: Գնա՛ Սուրբ Գիորգ Դեռք տա՛ն: Հոն ո՛չ անձնասպանի ո՛չ անձնասպանութեան վրայ խօսը կայ: Գացի, Սուրբ Գիորգ Դեռքը տա՛ն, բացի եւ կարգացի: «Իսկ այս ո՞վ է՝ որ դիմեալ քայ յեղովմայ, կարմրութիւն ձորձոց իւրոց ի Բոսորայ, դեղեցիկ պատմութեամբ եւ բուռն զօրութեամբ. . . » Եւ ահա, մայր իմ, Աստուածաշունչին մէջ ալ կը գտնեմ չըզալ Օղլուի դիւցադնն: Այն աշխուական, գեղեցիկ, հզօր, արի պատանին է՝ որ Աստուածաշունչին մէջ ալ գէմն կ'ենէ: Այդ ծայրն յերկնից չը՝ հասնիր, այդ ծայրն ո՛չ ապաքին երկնաւոր հօր ծայրն է առ անձնասպան երիտասարդն ուղղեալ: Եւ՝ երիտասարդն ո՛չ ապաքին երկնաւոր հօր պիտի պատասխանէ Վէրթէրի, Եօրէն-հաուէրի խօսքերով: «Աղխարհ ամենուրեք նոյն է. ամենուրեք վիշտ ու վատակ. . . » Նուրանիա՛, ներկայութեանդ պէտք կը զգամ. դո՛ւ կարօղ ես զօրացնել, զուարթացնել զիս . . .

նոյն 5

Ու Սօֆիին, Հիմայ Տիկին Սըլաւեան է: Հարմիր գացի՞ք արդեօք: Մայրս չը կրցաւ,

անհանգստութեան պատճառաւ. այս տարի չը կրնար կոր շիրտուիլ մայրս: Սօֆիին. հիմայ երջանիկ է. Սըլաւեան էֆէնտին իր վրայ կը միացնէ՝ ամուսնոյ մը վրայ Սօֆիին փնտրած յատկութիւններն: զեղադէմ ազնիւ, բարեկիրթ, ուսեալ, դիրքի եւ ազդեցութեան տէր. այդպիսի ամուսին ո՞վ չուզեր: «Ես» պիտի գոչեմ: Բայց տարօրինակ էակ մ'ես դու, ըս'ր իմ դու Հնդիկդ կուզես: դու ամուսին մը կ'ուզես, որ զքեզ պաշտէ ալ եւ տանէ, որ գիշերն աշխատի եւ ցերեկն զքեզ սարէ սար եւ ծովէ ծով պտտողնէ, որ շատ դրէ՛ այլ եւ զրակահեղութիւնն եւ ամեն բան շատ արհամարհէ: Բայց Հնդիկդ ո՛ւր է: Բայց Հնդիկիդ ինչպէս յարեալ մնացիր այն յայտնութեան յետոյ: Ինչ անէ՞քներ թափեցիր իր գըլ-խուն. պահած եմ եւ անցեալ որ կարդացի նորէն այն Օրագրիդ, ուր կը յայտնուի Հնդիկդ իբրեւ . . . խարեայ: Երբ որ իսկ շատ էր զայն բարոյութիւն մոռնալու համար. այն Օրագրիդ թուականէն ի վեր երբեք ամիսներ անցեր են, եւ յաւէտ քան երբեք կը յիշես դու Հնդիկին: Ո՛չ, խարեայ չկրնար կոչուիլ հանելուկ մ'է՛ այդ երիտասարդն: Ինչ եղաւ. ո՛ւր է:

նոյն 6

Ինչ սիրուն, ինչ ուշիմ, տղայ եղեր է Տիգրանն: Այսօր Տիկին Սիմոնեանին այցելութեան զնացինք մօրս հետ: Տիգրան գարեջէն եկաւ: Ձեռքերնին համարեց: Մայրս կրկնեց իրեն գարեջէն արձակուող տղայոց ուղղութեամբ հին բանաձեւն. «Ապրի՛ տղաս. ինչ անուշ կը հոտի վրայդ» — «Բայց դպրոցին հոտը չէ՛՝ ձայնարկեց հանձարեղ տղան. անուշ չը հոտիր մեր պպոցը. զատ՝ աղտոտ տղաքներ կան: չեն ալ կրթութիւն պանիր հաց կ'ուտեն. ու՛ ձեռքերնին վրանին կը սրբեն: Դպրոցը ընտր անուշ հոտի: Ի՞մ մայրիկս երեսո ամեն առտու ուր էք: Բայց ջուրով կը սրբէ. հարկաւ ես ալ անուշ կը հոտիմ բան մըն ալ ուտեմ՝ նէ՛ ձեռքս կը լուամ: Գիշերս ու տետրակներս ալ մաքուր կը մնան: Գաստունները բոլոր իմ գիրքս կ'ուզեն՝ վրան նայելու համար: — Ձեր գաստունները գրքի վրայ կը նային, ընդ միջեց մայրս: — «Հասկա ինչ պիտի ընեն. մեր գաստունները մայրիկս պէս ըլլային նէ, ես հիմայ դպրոցէն ելեր էի: Մայրիկս օր մը գիրք չառնէր ձեռքը: Քարէ տախտակն ու քարէ գրիչը ձեռքս կուտայ, ու ինքը կը խօսի. կը զըրեմ, կ'արեմ, կը սորվիմ: Գարեցի՛ ինէ՛ վերի կարգի տղաքը բան կը հարցունեն ինձի: Ու վաղեց Տիգրան, քարէ տախտակն ու քարէ գրիչն առաւ եկաւ. չըջանակ մը գծեց, եւ ինձ հարցուց թէ գծածն ի՞նչ կը կոչուէր: «Երջանակ» պատասխանեցի: «Իրանս կոր» աղաղակեց՝ առանց ձեռքէն ձգելու քարէ գրիչն: Այն չըջանակին մէջ տեղ կէտ մը դրաւ, կէտին վրայէն ուրիշ գիծ մը քաշեց, գծովներ գծեց, եւ հարցուց. «Հիմայ չըջանակն ի՞նչ եղաւ: — Երկրագործութիւն: Ըսի. «Այս ալ գիտցար:» մըն, ջեց՝ մատով գիծերն աւերելով ու չըջանակին մէջ թողով միայն կէտն. սկսաւ թանձրացնել խոշորցնել կէտն, ուրիշ շառաւիղներ քաշեց հիանալի ուղղութեամբ: Չըջանակն ուրիշ չըջանակի մէջ առաւ, ու հարցուց նորէն. «Այս ալ անուշնէ՛, տեսնե՞ք: — «Անիւ» Տիգրան՝ բա՛ն մը չարտասանելով՝ դարձաւ մօրն, որպէս թէ յանդիմանէր զայն որ իրեն շատ բան չէր ուսուցած: «Հիմայ Օրագրիդ Միլանիան ալ քեզ պիտի քննէ՛ ըսաւ մայրս: «Ինչ կ'ըլլայ. թող քննէ:» ծայրեց Տիգրան հանգարտօրէն: Դուրս ե-

ցայ. ինչ հարցնէի: Սեղանին վրայ երբեք չուրի թիւ մը կար, նոյնիմաք ամսաթիւն (եղած չէ՛ դեռ դեկտեմբերն): Առի զայն, եւ հարցուցի փոքրիկ Տիգրանին. «Ահաւսիկ այս ալ երբեք չուրի կը կոչուի: Բայց ինչո՞ւ կըր չէ: — «Անոր անանկ կը վայել. քառակուսի գլուխներ շատ կան այդ երբեք չուրի մէջ: Գոնէ անիւներ դնէին ու քաղցնէին. քանի որ քառակուսի բան մը չը գտնար, չը քալեր: 1887 փետրուար վեցն է այսօր, ու դեռ 1886 դեկտեմբերի թիւը պիտի ելլէ. մայրիկս ալ ամեն օր կը սպասէ, որովհետեւ՝ ինչ ալ ըլլայ՝ կարծեմ թէ Պօլսոյ ամենէն աղէկ հանդէսն է երբեք չուրի: Ամենքս ալ ի բերան մնացինք: Գեռ տաս տարուէ լրացուցած չէ՛ փոքրիկ Սիմոնեանն: Անչուտ տղայ մ'ի բնէ մեծապէս օժտեալ ըլլաւ է՝ այսպիսի պատասխան մը տալու համար, բայց վարժարանաց մէջ նոյնքան օժտեալ տղայք չը կան՝ այց կը կ'ըրգնէ Տիգրանիկ: Ինչ անհամեմատ առաւելութիւն է տղու մը համար՝ ուսեալ ու բարեկիրթ մայր մ'ունենալ. մանաւանդ մայր մը՝ Տիկին Սիմոնեանի նման, հետաւորաւ մանկավարժութեան: Ձէի յագեցնար համարելով փոքրիկ ընկիւն, եւ կ'ըսէի. «Գարեց ինչո՞ւ կ'երթաս, դուք վարժապետներուց կրնաս բան սորվեցնել:» — «Գարեց ինչո՞ւ կ'երթամ. ուղեւորս կ'երթամ: Թաղական Աղաներուն օժիքէն չազատեցա՛ւ հայրս. Թաղական Աղաներուն ուղածն ես չեմ. անոնց հոգն է որ թաղին տղաքը կարգալ են սորվեր. անոնց ուղածը իմ թոշակս էր: Բայց, հայրս կուտայ թոշակս, ու անոնք չեն տար դաստառներուն ամսականը: Մայրիկս չհակառակեցաւ դպրոց երթալուն. կեանքի կը վարժուիմ, անոր համար կ'ուզէ մայրիկս որ դպրոց երթամ:» Սյու տղան, Նուրանիա՛, մուցուց ինձ Պէյի Ֆուատ պէյն. արտաքոյ կարգի բան մը՝ արտաքոյ կարգի բանով մը կը նսեմանայ: Տիգրան արդարեւ արտաքոյ կարգի բան մ'է, հրաշալի մանուկ մ'է:

նոյն 7

Պէտք է սուրբ պահել շարաթիւն:

ՄԵԼԱՆԻԱ

ԹՂԹԱՆՑՈՒԹԻՒՆԻ ՄԱՍԻՍ

ՏԳՂԻՍ, 15 յունվարի

Այս օրերս թէ Տիգրանի եւ թէ ուրիշ քաղաքների հայերը մի սարսափելի լուրի ազդեցութեան ներքոյ են: Հարուածները մէկը միւսի յետեւից են թափուում: Պետեր բուրգից, Ռուսոյց հանրային կրթութեան նախարարութիւնից հրահանգ է եկել, որը պատուիրումէ կառավարչական դպրոցներում Հայոց կրօնն հայերին ուսուցելու դաս տալ Սիքանի խօսքով յիշենք իրողութիւնը: Կովկասեան այժմեան կառավարչապետի գաղաւթ սկսած, Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Եանովիկն անդադար գանալուն նախագծեր է կազմում, ինչպէս իրանք ասում են, Անգլիկոսկոսքը անուանելու համար: Ռուս կառավարութեան Կովկասեան այժմեան շինութիւններն նպատակն այժմ այդ է: Այնպիսի մարդիկ են կանգնած այժմ բոլոր գործերի գլուխն, որոնք ամէն միջոց դեղեցիկ են համարում այդ նպատակին հասնելու համար: Այդ խաւարամիտ եւ բռնաւոր քաղաքականութիւնն է, որ ճնշել է այժմ Ռուսաստանն եւ խեղդումէ բոլոր փոքրիկ ազգութիւնները: Վրացիների վերաբերու-

Թեամբ այդ քաղաքականութիւնը բաւականին յաջողութիւն է դառնել Վրացիք խառնուեցան, եւ այսօր Վրացոյ եկեղեցիներէն հալածուած է Վրաց լեզուն: ողբալի է տեսնել, թէ ինչպէս վրացի բազմաւն անգիր արած ուստերէն բառերով աղօթում է այն ժողովրդի առաջ, որը մի խօսք էլ չգիտէ այդ հիւսիսային լեզուից: Վրաց ուսումնարան այժմ գոյութիւն էլ չունի: Թուրք ազգաբնակչութեան վերաբերութեամբ կառավարութեան յայտնի տեսակի դործակալները միամիտ են: Բոլոր ոյժերն եւ ջանքըն հայերի վրայ են դարձրած: Հայոց դպրոցների փակուելու եւ նորից ֆաշիստականութիւնը բաւականին բան սովորեցրեց: Եւստիֆովուն եւ ընկերութեանը: Գիտէք թէ ինչ եղբայրացութեան եկած կը լինին: Այդ օրից սկսած կարծէք Տօրտոյի քաղաքականութիւնը մեր վերաբերմամբ աւելի յանգուզն է դարձել: Մի քանի ամիս առաջ, այդ Եւստիֆովին հարց բարձրացրեց որ կառավարութեան դպրոցներում կրօնը հայերին ուսուցնուով դատարի: Իրան դէմ թէ կրօնութեանը քահանայներն եւ թէ մի քանի Սոսնիստիներ բողոքեցին: Էջմիածինը մի խորհրդաւոր լուսնի պահէ: Այն ժամանակ մեծ յաղթուեց ընկաւ Տփլիսում: Եւստիֆովին յայտնեց, որ ինքը գրել է այդ բոլորի մասին Պետերբուրգի նախարարութեան եւ սպասում է հրահանգի: Հրահանգիցն է կախուած: այդ մտադրութեան իրազօրծիլը կամ չիրազօրծիլը: Այժմ հրահանգն ստացուել է: Ուրիշ բան սպասելն յիմարութիւն կ'լինէր եւ նախարարութեան հրամանը սրազ կերպով կարգադրուէ կառավարութեան դպրոցներում հայերին կրօնը ուսուցնուով դատարի: Գաւ մի ծանրակիւ իրողութիւն է: Կառավարութիւնը դրանով մի խիտ քայլ է անում, եւ կարծէք համոզուած է որ կ'յաջողի: Բայց որպէս զի հարուածը շատ զրգուիչ չ'լինի, հրահանգի մէջ ասած է, որ ուստերէն դատարի է տալ այն աշակերտներին, որոնք հայերէն չ'գիտեն: Անգրկովկասեան կառավարչական դպրոցների աշակերտների մեծ մասն հայեր են: Հայ ընտանիքների շնորհիւ, մի մասն այդ աշակերտների հայերէն չ'գիտեն: Եւ այդ է ահա թշուառութեան հիմքը: Այժմ ի՞նչ պէտք է մտածեն եւ անեն տնտեսական ծնողքը: «Խայտառակութեան պատճառն էլի մատմաբ մեղանից է» ասում են շատերն: Ինչ եւ իցէ, իրողութիւնն այդ է: Եւ այդ իրողութիւնն է որ այսօր բոլոր շրջաններում մեծ աղմուկ է հանել: Խօսում են խօսում են: զարմանում են: ախիւս են: «Այս ի՞նչ բռնութիւն է» ասում են շատերը: «Ի՞նչ է տեսնում կաթողիկոսը» ասում են միւսները: «Ի՞նչ անել» ասում են շատ շատերը: Մի բան պէտք է անել: ասում են շատերը: . . . Իբրազիմութիւնն, ինչպէս երեւում է, խօսել չի կարող, որովհետեւ մինչեւ այժմ լռել է: Ամբոխին վրա այդ բանը շատ ծանր տղաւորութիւն է թողել: Անկասկած մեծ աղմուկներ կ'լինին, երբ հրահանգը դործադրութեան մէջ մտնի: Ո՞վ է պատասխանատուն: Ի՞նչ պէտք է ասեն Էւստիֆովին եւ ընկերութիւնն: Ամէնքն էլ այդ մասին են խօսում: Կառավարութեան այդ ընթացքը լաւ ապագայ չէ խօստանում: Տեսնե՛ք: Մանրամասնութիւններն յետոյ: Սակայն այդ ճիշդումներն անկասկած աւելի բաց կ'անեն մեր հայերից շատերի աչքերն, որոնց թմրութեան շնորհիւ մայրենի լեզուն եւ ազգութեան զգացումները թուլացած էր . . .

Բռնութիւնն եւ ճնշումը միշտ ծնեցընում են ամենագեղեցիկ զգացումներ: համբերութիւնն հատած ժողովրդոց մէջ: այդ պէտք է հասկանային ուս կառավարութեան միակողմանի եւ փաստակարգործակալ չ'լինողներն, իրանց առելի ուղղութեան, լրտեսութեան եւ մատնութիւնների ժամանակ, որոնք առաւօտից մինչեւ երեկոյ կրկնում են: «Շիտայ հայ, չ'կայ վրացի, չ'կայ թուրք, ամէնքն էլ ուս պէտք է լինին»: Տեսնե՛ք . . .

Այդ տխուր տղերքին աւելի տխուրութեամբ պէտք է աւելացնեմ մի խայտառակ նորութիւն: Տփլիսում ոստիկանութիւնը գլխաւ կեղծ թղթադրամ շինողներ գտնուած են կեղծ դրամներ, մեքենաներ: Շատերն են կասկածում: արդէն մի քանի հոգի ձերբակալուած են, եւ ոմանք էլ հսկողութեան ներքոյ են: Բայց ո՞րպիսի խայտառակութիւն: այդ քանի մէջ մեղադրուած մի հայ քահանայ . . . Գիտէք, որ հայ մի քանի ներկայացուցիչները դեռ մի քանի տարի առաջ մի այդպիսի բանի մէջ բռնուեցան, Էջմիածնի մօտ գտնուող Հիփոսիսի վանքում: Անկասկած այն խայտառակ դործի մանրամասնութիւնները ձեզ յայտնի կը լինին, որ իր ժամանակին այնքան աղմուկ հանեց եւ մեծ աղմկ բերեց հայ ժողովրդին: Այսօր ինչպէս երեւում է, նոյնը կրկնուեց: Գործի ընտելութիւնը դուրս մեծ խայտառակութիւն կ'դուրս բերի: Ի՞նչ տեսել: Ի՞նչ անուշ տալ: հայ քահանայն հայ տարիաւորները հետ միասին կեղծ փողեր են կտրում: Ի՞նչ անել: Գառնեցէք: Ձեռք չի կարողանում դրել: այդ դործի մէջ կասկած վում են այնպիսի անձինք եւ այնպիսի շրջանի պատկանողներ, որ յիշելը զրիշը զրիշու անգոր է: Կախառիմ ոստիկանութիւնն որպէս զի հազարիւմ ձեզ հարկաւոր մանրամասնութիւնները: դուք անկախ կերպով կարող էք դատողութեան ենթարկել այս խնդիրը:

Ռ. Հ.

ԳՐԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

1887 տարին սկսում բարեկամող հմայքներով հայ գրականութեան համար: նորանոր հրատարակութիւնը կը խոստանան դործունեայ տարի մը ընել այս նոր շրջանը: Մաղթելով որ քանակէն աւելի սրտով պարծենալու անիմներ ընծայուին մեզ, շարունակե՛ք հաղորդել համաօտ տեղեկութիւններ ազգային ամէն հրատարակութեանց մասին:

Ա. ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ. Բարոյական, Ուսումնական, Արուեստական, Հրատարակչական, Վերականգնողական Միջնորդական Միջնորդական: Հրատարակիչ եւ պատասխանատու: Հ. ՌԱՓԱՅԷԼ Վ. ՊԱՐՈՆՁ:

Ստացանք սոյն հանդիսին Յունուարի եւ Փետրուարի թիւերն: Ամաթութիւնն խառնագրութիւնն առաջին թուոյն մէջ կ'ընէ իւր հրատարակական դաւանութիւնը: զոր չենք կարող աստ համառօտել: փասն զի մի քիչ դժուարիւց լեզուաւ գրուած լինելով, չի կրցինք հոգին լաւ ըմբռնել: Բայց փասնը մը չկայ թէ գալթակղական կամ փաստակար պարունակութիւններով կրնայ ճոխանալ այդ թերթին: Երբեք լի վարդապետաց անունը բաւական երաշխաւորութիւն է: Թէ պարունակութիւնն աստ զնենք, կրնանք աւելի ամփոփ գաղափար մը տալ:

Ա. Թիւը կը պարունակէ:

Ուսումնական 1. Լուսոյ եւ ջերմութեան էութիւնն: 2. Սքանչելիք Ձուոյ: 3. Պերսեպոլէայ սեպագիրք: 4. Հինգերորդ դարու չորս հայ պատմագրութեանց ժամանակները:

Բարոյական Պատմական նորավէպ (Գաւառական):

Այլ եւ այլ 1. աշխարհի ամենամեծ հեռագէտը: 2. Նոր մտորակներ: Մկնեռն հեռացնելու միջոց: 3. Խնձորի դործածութիւնը:

Մանրապոյթ 1. Մովսէս հրայրեացի: 2. Հարաւային Աֆրիկէի աղամանդի բերքը:

Քաղաքական Պաշտպան խնդիր:

Բ. Թիւը կը պարունակէ:

Ուսումնական 1. Լուսոյ եւ ջերմութեան էութիւնն: 2. Բնական եւ արուեստական ըուն: 3. Պերսեպոլէայ Սեպագիրք: 4. 3. Հանուշ լեհացի հայագէտ եւ կալիցիոյ Հայոց գաւառալեզուն: Քրիստոնեայ Հայաստան եւ իւր գրականութիւնը: 6. Սրշակ արքայ:

Բարոյական Պատմական նորավէպ (Գաւառական):

Այլ եւ այլ Նորավերք: Տնտեսական, մանրապոյթ:

Քաղաքական տեսութիւն:

Ինչպէս կը տեսնուի նիւթոց պարունակութենէն, սոյն հանդէս մեծ մասամբ թարգմանութիւն է, մասամբ հեղինակութիւն, բայց մասնաւոր չըմանալի համար չի հրատարակուիր: Այլեւայլըներն ու նորավէպներն կրնան կարգացուիլ ընտանեկան չըմանալիներու մէջ, ուսումնականներն օգտակար են դպրոցականներու, իսկ ազգային գրականութեան վերաբերեալ կէտերն յարգանքով հնազանդներու համար են: Երկու թերթերուն մէջ հազիւ թէ կը գտնենք նիւթ մը որ ժամանակակից կարեւորութիւն ունենայ, այն է երկրորդ թուոյն մէջ 3. Հանուշ լեհացի հայագէտին եւ կալիցիոյ Հայոց գաւառալեզուն վրայ արուած տեղեկութիւններն: Հետաքրքրական գլուխ մ'է «Արշակ Արքայ», թարգմանութիւն դերմաներէն օտանաւորի մը զոր դրած է անցեալ տարւոյ դեկտեմբերին Հայերանդ, Վիշննայի կայսերական թանգարանին վերատեսուչն: (Այս նիւթի մասին աւելի ընդարձակ տեղեկութիւն կը տրուի մեր «Արձագանք» բաժնին մէջ):

ԱՄՍՈՐԵԱՅ ՀԱՆԴԵՍ ըննադատութեան նիւթ չենք կրնար ընել: Նա մեր ազգային կեանքի վրայ ներգործութիւն մը ունենալու կոչում չունի: Մեր ազգային կեանքի դանազան երեւոյթներն անըմբռնելի պիտի մնան նոր ամաթութիւնն եւ այդ բնական է: Իսկ ուսումնական եւ հնադիւանական նիւթերն կրնան անորոշով վարդապետիլ բայց ընդհանրապէս թիւները մասնագէտներու գործ է:

Այլ որովհետեւ այդ նոր հանդէսն ո՛չ սիրտ կը յուզէ, ո՛չ եւանդ կ'արժարծէ եւ ո՛չ կրքեր կը բարրօքէ, աղկէ Հնդկաստիւ թէ անօգուտ թերթ մը լինի: Ընդհակառակն, հանդարտութեամբ կարդացուելով իւր դրական օգուտները կ'ընծայէ, եւ այսքան յուզիչ կըրտ: Թերթ եւ գրութիւններու մէջ ծանրագլուխ պատկառելի հրատարակութիւն մը կընայ: առողջաբանական օգտակարութիւններ ունենալ:

Թերթի լեզուն թերեւս աւելի զուտ մաքուր հայերէն է: քան թէ մեր սովորական խօսած գրած լեզուն, բայց մեզ համար վարժութիւն պէտք է լաւ մը ընտանեանալու համար:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ի Տ Ա Լ Ի Ա

Բաժանորդագիրն չափ համեմատ 8 ֆրանք տարեկան : 8 ֆրանք վեցամսեայ : Եւ այս փոքրիկ գումարով կարելի է ունենալ տարեկան գեղեցիկ մեծ հատոր մը կատարելապէս մաքուր տպագրութեամբ եւ հրահանգիչ պարունակութեամբ :

Բ. ԼԵՁՈՒ. Ուսումնաքերք Ամսօրեայ խմբագիր-Տէր Հ. ՍԵՐՈՎԱԵՍ ՏԵՐԱԽԵԱՆ

Կը հրատարակուի Կ. Պոլիս, տպագրութիւն Գ. Պաղտատեան (Արամեան) :

Սոյն հանգիսին Ա. թիւն հրատարակուեցաւ Յունուարի սկիզբն, իսկ յաջորդ թիւերը պիտի հրատարակուին ամէն ամիսով վերջ սկսեալ Փետրուարէն :

Յունուարի թիւոյն բովանդակութիւնն է.

Երազիւն. — Հաւատք եւ գիտութիւն. — Էզրէկամ խոսողութիւն. — Մանկավարժութիւն. — Էզրէկամ քննական (Հայրական 2) — Թուրք լեզու. — Պատմական. — Այլ թիւ մը վերջին ամիսները. — Պատգիւտին գիշերք. — Ստիակ. — Էզրէկամ եկեղեցական մը. — Մեքսիկ. Մեքսիկ. Ամէն ինչ. — Նոր ամսութիւն մը.

Հ. Սերովբէ Տէրվիշեանի անունը պատկառելի է ոչ միայն մեզ այլ եւ Եւրոպիոյ գիտնոց : Նորա գլխաւոր գործերն Հնդկաւորդական նախաւեցը եւ Հայկ-Կապ (Կերտ լեզու) եւ բազմաթիւ յօդուածներն արդէն գիտնական վարդապետին տաղանդն ապացուցած են : Հայ մատենագրութեան համար մեծ գոհունակութեան առիթ մ'է տեսնել որ այսպիսի մի անձ կը ձեռնարկէ խմբագրութեան :

Սակայն պէտք է խոստովանիլ թէ Էզրէկամ առաջին թերթն ըստ ամենայնի համապատասխանող չէ մեր փափագանաց : Արդիւնետեւ բարեկամութեան առաջին ապացոյցն է անկեղծ լինել, ուստի անկեղծօրէն կ'ըսենք թէ Հ. Սերովբէ Տէրվիշեան սխալ ընթացքի մը կը հետեւի : Այդ սխալն — որ մեր հրատարակողներուն բազմոց սխալն է, այն է որ կ'ենթադրեն թէ ամէն բանի կարող են : Ամենագէտ տաղանդ լինելու յաւակնութիւնը մահաբեր է ամէն տաղանդի : Զայս կ'ապացուցանէ Էզրէկամ առաջին թիւն :

Արքան հետաքրքրութեամբ, որքան ախորժակով կարդացինք — ունի իսկ երբեմն համափառ չգտնուելով հանգերձ — այն ամէն տողերն որք Հ. Սերովբէի խելական տաղանդին դրօշմը կը կրեն, եւ կ'ապացուցանեն խորին հմտութիւն մը : Ահա՛ այն շրջանակն ուր պէտք է փակուի գիտուն վարդապետը : Բայց երբ կը փորձէք ընար մը ձեռք առնուլ այդ ժամանակ անմեղ ժպիտ մը միայն կ'ունենանք : Այդ բանաստեղծութիւններն յաջողած չեն : Ոչինչ նոր, ոչինչ արժանի ուշադրութիւն գրաւելու :

Չենք ըսեր թէ գիտուններն իրենց սրբօրին մէջ բանաստեղծական զգացումներ չունին : Խորութիւնն ու բարձրութիւնը մենաշնորհ մը չէ, բայց այդ զգացումներն բացատրել եւ գոյնա թափանցել ամէն սրբօրինութեամբ, ահա՛ այդ մենաշնորհեալ արուեստ մ'է :

Փափաքելի է որ Հ. Ս. Տէրվիշեան չիցրուէ իւր մտաւոր ոյժերն, սրբան կարելի է ամբողջ գոյնս մի քանի կէտերու վրայ եւ այդու միայն կարող պիտի լինի իւր թերթին ընծայել շահագրգռական իսկ եթէ կը կարօտի բանաստեղծութեանց — հաւանօրէն ուսումնական բանաստեղծութեանց — այդ մասին կրնայ գիտնալ աշխատակիցներու :

Բաժանորդագիրն է տարեկան կէս ոսկի օսմ, թղթատարով փոխուել գահեկան : Հատն հինգ դահեկան :

Եւրոպիոյ օրուան կարեւոր խնդիրներէն մին է Իտալացոց պարտութիւնն յԱլբրիկէ : Այդ խնդիրն օր ըստ օրէ կ'զգենու ծանրակշիռ կերպարանք մը, հետեւաբար հարկ կը համարենք ամբողջ գաղափար մը հաղորդել նորա ծագման և արդի վիճակի մասին :

Երբ Կորսոն զօրավարը դժուարութիւններ կը կրէր Սուտանի արշաւանաց մէջ, Անգլիա առաջարկեց Իտալիոյ իրեն հետ միանալ Սուտանի արշաւանաց մէջ : Իտալիոյ կառավարութիւնն ընդունեց այդ առաջարկն, ու զեղով առիթէն օգուտ քաղել Ալբրիկէի մէջ գաղթական զիջարութիւնն մը հաստատելու համար :

Իտալիոյ դահլիճը պատերազմական պատրաստութիւններն ըրաւ, մարտանաւ ու զինուոր ձախճայ հանեց, և յետոյ Անգլիոյ առաջարկեց գրաւոր գաղտնացութիւն մը ստորագրել : Անգլիոյ դահլիճը չ'ընդունեց այս առաջարկ : Այն ատեն Իտալացիք չուցեցին այլ ևս շարունակել իրենց մասնակցութիւնը Սուտանի արշաւանաց մէջ և բաւականացան գրաւելով Կորսիր ծովու նաւահանգիստներէն մին, Մասուան :

Այդ միջոցին Ալբրիկէի երկու պիտութիւններ գծաւոր էին իրարու հետ : Հապէշիտանի թագաւորն և Քոսայի թագաւորն անհամաձայն էին ի միասին : Հէրրաւայի որ կը գտնուի այդ երկու պետութիւններուն և ծովափին միջեւ : Իտալացիք ուղեցին օգտուիլ այս երկպառակութեան և իրենց հաշուոյն գրաւել Հէրրաւան : Տեսնելով Եւրոպական տէրութեան միջամտութիւնը իւր գործոց մէջ և վախաւորով որ Քոսայի Մէլիներ թագաւորն իտալացոց հետ միանալով վնասեն իրեն, հապէշաց Յովհան թագաւորն իւր սպարապետ Ռաս-Անուան 55,000 զինուորի գլուխ անցած զրկեց ընդդէմ Իտալացոց : Իտալացի զօրավարն օգնութիւն խնդրեց Հաւսէն : Նոր զօրք չհասած, ճակատամարտ տեղի ունեցաւ Սապիի մօտ, արիւնոտ ճակատամարտ մը յորում Իտալացիք 400է աւելի մեռեալ ունեցան և Հապէշը գերի բռնեցին Իտալացի սպայ մը, Սալիմպէնի, և բաւական զօրք զորս իբր պատանդ կը պահեն : Ռաս Անուան ալ մեծ վնասներ կըրեց և այժմ քաշուած է : Յայտնի չէ թէ իւր կորուստը դարձանէ՞ յետոյ, առաջին յաջողութեան շնորհիւ նոր յարձակում պիտի գործէ՞ Իտալացոց վրայ : Ինչ որ ալ ըլլայ, Իտալացիք այժմ կը փութան ամրացնել Մասուայի գիւղին և բաւական քանակութեամբ նոր զօրք զրկած են Կորսիր ծովու եզերաց վրայ :

Վառնայի թղթատարական պայուսակն մինչեւ այս առաւօտ առնուած չլինելուն, քաղաքական վերջին լուրերը չկրցինք հրատարակել :

ՕՐԱԳԻՐ

Կիրակի, փետր. 8 : պիտի կատարուի Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցոյ օծումն :

— Զորեքշաբթի օր Սաւան Ժողովն գրա-

ղեցաւ Պէշիկթաշի գերեզմանատան խոնդրով : Եկեղեցական պատգամաւորութիւն մը առաջնորդեալ Նար-Պէյ Խորէն եպիսկոպոսէն ներկայացաւ Ժողովոյն եւ ինչ ինչ առաջարկութիւններ մատուց :

Ժողովը կարող չեղաւ յանգիլ վերջնական որոշման : մը եւ հարկ դատեց ներկայացնել խնդիրն Ազգ. Ժողովոյ : Կրօնական եւ Քաղ. Ժողովները տարբեր տեղեկագրեր պիտի բերեն Ժողովին : Մասնախումբեր ընտրուեցան այդ տեղեկագրերը պատրաստելու համար : Կրօն. Ժողովոյ կողմանէ ընտրուեցան Գլխաւոր Զմայեակ եպիսկոպոս, Աղանեան Ներսէս եւ Սարաճեան Յովսէփ վարդապետ : Քաղ. Ժողովոյ կողմանէ Նուրեան Յովհաննէս, Նորատունկեան Գարրիէլ եւ Սէթեան Միհրան էֆէնդիները :

— Մակար Կաթողիկոսը 400 ռուպլի նըպատ (4400 զր) զրկած է Հիւանդանոցին :

— Այս երկուշաբթի ցերեկ կատարուեցաւ յՕրթաղ իւզ ամուսնութեան հանդէսն Օր. Սօֆի Մագսուտեանի ընդ Սովաճեան Կարապետ էֆէնդիի, Ստեփանու Սէթէլի վարչութեան եւ բարձրագոյն պաշտօնեայ Պանը Օթօմանի մէջ : Հարսանեաց փառաւոր հանդէսն սքանչելի առիթ մը եղած է գեղեցիկ գաղափար մը տալու օտարագիր դէսպանական, լրագրական եւ երեսմտական մարմնոյն, հայկական արարողութեանց եւ հայկական ճաշակի մասին, ինչ որ յաճախ չ'պատահիր : Անգլիոյ դեսպանուհին ի մասնաւորի սքանչացում մը ունեցած է հայկական արարողութեանց վրայ որոց կը նախագահէր Պատրիարքն :

— Ազգանուէր Հայունեաց ընկերութեան ի նպատակ կազմաւորեալ պարահանդէսն փառաւոր եւ յաջող կերպիւ տեղի ունեցաւ այս հինգշաբթի գիշեր Նոր Թատրոն Իւրայի Հասոյթն եղած է 800 ոսկի Յառաջիկայ շաբաթ գիշեր, 14 փետր տեղի պիտի ունենայ Միացեալ Ընկերութեանց մեծ պարահանդէսն :

— Ազգ. Ժողովն յառաջիկայ շրեքշաբթի օր յարտասովոր նիստ պիտի գումարի Պատրիարքարանի մեծ դահլիճի մէջ, Պէշիկթաշի գերեզմանատան խնդրոյն համար : Նիստը դժնդիակ է :

Վեհ. Սուլթանը նախընթաց օր Կոստ. պալատ հրախրելով Արտաքին գործոց նախարարի խորհրդական Տատեան Յարութիւն էֆէնդին, Իմթիյազ պատուանշանի ոսկի և արծաթ շքադրամները նուիրեց Ն. Վսեմութեան :

— Եգիպտական խնդրոյն վրայ բանակցութիւնը չ'սկսան գեռ : Սըր Տ. Ռուդֆի կողմէ Բ. Դրան մատուցեալ ծրագրոյն մէկ ամիս փոփոխման հեռագրաւ հաղորդուած լինելով Ղազի Սուլթանը փառային յեգիպտոս, այս վերջինն հաղորդած է Բ. Դրան թէ Խալիվն եւ եգիպտական ժողովուրդն հակառակ են Անգլիոյ այդ ծրագրոյն ոյր հիմնական առաջարկն է չեղորացումն Եգիպտոսի :

— Անատոլի Երկաթուղեաց խնդիրը նախարարաց խորհրդոյ ուսումնասիրութեան առարկայ է այս պահուս : Կըսուի թէ Պ. Սիֆէլտէր եւ Պ. Բրէսէլ պիտի միանան իրենց ծրագրոց գործադրութեան համար :

— Երէկ օսմ գոնօլիաէի գիւնն էր 14.20 զր : Իսթիզրազ Տախիլի 40.22 եւ Իսմէլի Երկաթուղիք Գր. 31.50 :

Հրատարակուեցաւ «Գրական եւ Իմաստասիրական շարժում» յունուարի թիւն, ընտիր պարունակութեամբ :

